ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2025 թվականի N 1614 - Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏԱՐԵՑ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐԸ, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մասով ու 42-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգերը, պայմանները, տրամադրվող խնամքի ձևերը, տրամադրվող սոցիալական ծառայությունների, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ հաշմանդամություն ունեցող անձանց տնային խնամքը 2027 թվականի հունվարի 1-ից տրամադրվելու է հավաստագրի միջոցով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, տրամադրվող խնամքի ձևերը, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1744-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչել՝ բացառությամբ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի և 6-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև վերնագրից հանել «ԿԱՐԳԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ,» ու «, ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԽՆԱՄՔԻ ՁԵՎԵՐԸ, ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱ-ՑՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ» բառերը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 49-րդ կետի 1-ին ենթակետից հանել «(մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների, երեխաների աջակցության կենտրոնների» բառերը, իսկ 2-րդ և 3-րդ ենթակետերում «տարեց և (կամ)» բառերը փոխարինել «տարեց կամ» բառերով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» N 1599-Ն որոշման հավելվածում՝

1) 2-րդ և 7-րդ կետերում «հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (մանկատներ)» բառերը փոխարինել «մասնագիտացված հաստատություններ» բառերով, հանել «սոցիալական հոգածության», «երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններ,» և «երեխաների աջակցության կենտրոններ,» բառերը, իսկ «տարեց և (կամ)» բառերը փոխարինել «տարեց կամ» բառերով.

2) 29-րդ կետում «տարեց և (կամ)» բառերը փոխարինել «տարեց կամ» բառերով, հանել «(մանկատներ)» բառը, ինչպես նաև «հատուկ (մասնագիտացված)» բառերը փոխարինել «մասնագիտացված» բառով:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի և աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 201-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի N 1 ցանկի II գլխում «հատուկ (մասնագիտացված) հաստատություններ (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատություններ, երեխաների աջակցության կենտրոններ,» բառերը փոխարինել «մասնագիտացված հաստատություններ,» բառերով, «տարեց և (կամ)» բառերը փոխարինել «տարեց կամ» բառերով, իսկ «սոցիալական հոգածության» բառերը հանել.

2) N 2 հավելվածի 1-ին կետում «հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների,» բառերը փոխարինել «մասնագիտացված հաստատությունների,» բառերով, «տարեց և (կամ)» բառերը փոխարինել «տարեց կամ» բառերով, իսկ «սոցիալական հոգածության» բառերը հանել.

3) N 2 հավելվածի 2-րդ կետում «հաշմանդամներին» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձանց» բառերով.

4) N 2 հավելվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետում «հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատներ), երեխաների խնամքի գիշերօթիկ հաստատությունների» բառերը փոխարինել «մասնագիտացված հաստատությունների» բառերով.

5) N 5 հավելվածի 17-րդ կետի 5-րդ ենթակետում «գիշերօթիկ դպրոցների, մանկատների» բառերը փոխարինել «երեխաների բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների» բառերով:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ը» պարբերությունում «տարեցների և» բառերը փոխարինել «տարեց կամ» բառերով:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի «Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի N 876-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1698-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ բաժնի՝

1) 10-րդ կետում «Մասնագիտացված մանկատների» բառերը փոխարինել «Երեխաների բնակչության սոցիալական պաշտպանության մասնագիտացված հաստատությունների» բառերով.

2) 11-14-րդ կետերում «Տարեց և (կամ)» բառերը փոխարինել «Տարեց կամ» բառերով, իսկ «հատուկ (մասնագիտացված)» բառերը փոխարինել «մասնագիտացված» բառով.

3) 12-րդ և 14-րդ կետերից հանել «սոցիալական հոգածության» բառերը.

4) 14-րդ կետում «առողջության կամ մտավոր խնդիրներով» բառերը փոխարինել «և վարքային այլ խանգարումներով» բառերով:

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտները և բժշկական զննության ծավալի ու հաճախականության ցանկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ձևերը հաստատելու մասին» N 347-Ն որոշման N 2 հավելվածի՝

1) 8-րդ կետում «և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (մանկատների),» բառերը փոխարինել «կամ մասնագիտացված հաստատությունների,» բառերով, ինչպես նաև հանել «երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների,» ու «սոցիալական հոգածության» բառերը.

2) 9-րդ կետում «տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, հոգեկան (այդ թվում՝ մտավոր) խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա և (կամ) ցերեկային խնամք և սպասարկում իրականացնող կազմակերպությունների» բառերը փոխարինել «ցերեկային կենտրոնների կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների» բառերով:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ